Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 01/16 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների մատուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 9 փետրվարի 2016թ. ժ. 10:00

Մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Ա. Պետրոսյանը | - | Գլխավոր տնօրենի տեղակալ(նախագահ) |
| Շ. Ալեքսանյանը | - | Գլխավոր հաշվապահ |
| Շ. Գրիգորյանը | - | ՆԻՎ-ի գլխավոր մասնագետ |
| Ա. Պետրոսյանը | - | ՊԲ-ի առաջատար մասնագետ (քարտուղար) |

Նիստի օրակարգը

1.ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 01/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակցի գրաված տեղի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փոստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների մատուցման ծառյությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1.ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 01/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝

- «Յու Հեփի» ՍՊԸ – (հասցեն՝ ք. Երևան, Կոմիտասի 28ա, 28),

1.2. «Յու Հեփի» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.3. «Յու Հեփի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները:

1.4. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար «Յու Հեփի» ՍՊԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 5 500 000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Հարց 2. Հրավեր ներկայացրած հայտերի և մասնակիցների զբաղած տեղերի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել «Յու Հեփի» ՍՊԸ-ն:

2.2 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՝ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ զբաղած մասնակիցին՝ «Յու Հեփի» ՍՊԸ-ին, ՀՀ կառավարության 2015 թ-ի հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշմանը կից հավելվածի (գնման գործընթացի կարգի) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխան երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով սահմանված թիվ 5 հավելվածը, կցելով նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրերի պատճենները, տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրությունների և այլն) պատճենները, կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը :

Հարց 3. ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 01/16 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գնումների գործընթացի աջակցման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի օրը հաստատելու մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

Սույն արձանագրության 2-րդ կետով պահանջվող փաստաթղթերը մասնակցից և ՀՀ ֆինանսների նախարարությունից հարցումն ստանալու օրվան հաջորդող օրը հանձնաժողովի անդամներին տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ:

Հանձնաժողի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Պետրոսյան

Անդամներ՝ Շ. Ալեքսանյան

Շ. Գրիգորյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան